«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Հայուհիների կերպարների վերլուծություն դասարաններում
ԱՌԱՐԿԱ	Մայրենի
ՀԵՂԻՆԱԿ	Լաուրա Հովհաննեսի Զիրոյան
ՄԱՐԶ	Երևան
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Գ. Գյուլբենկյանի անվան հ. 190 ավագ դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն_____3

Խոնարհ հերոսուհիները_____5

Եզրակացություն _____20

Օգտագործված գրականության ցանկ_____21

Ներածություն

Հետազոտական աշխատանքի նպատակն է բացահայտել 1915թ. մարտերին հայ հերոսուհիների անունները, ուսումնասիրել նրանց կատարած սխրագործությունները: Հետազոտական աշխատանքում ներկայացրել եմ 1915թ. ինքնապաշտպանական մարտերի պատմությունը, գնահատել եմ հայ կնոջ դերը հայոց պատմության ճակատագրական գոյապայքարում, որտեղ տղամարդու հետ կողք կողքի պայքարել է թշնամու դեմ՝ դարձել քաջ զինվոր:

Հետազոտական աշխատանքի արդիականությունը կայանում է նրանում, որ ցույց է տալիս սերունդներին 1915թ. ինքնապաշտպանական մարտերում հայերի փրկության աղբյուրը կազմակերպված լինելն է և զենքը ձեռքին պայքարելը: Դա հնարավորություն է տալիս բնակչության մի մասին փրկվելու, իսկ մնացածին զենքը ձեռքին պատվավոր մահ ընդունելու: Ինքնապաշտպանության ժամանակ հայ կանայք բարձր են պահել հայ ժողովրդի դարավոր պայքարի հերոսական ավանդները, ապացուցել են, որ իսկապես հայ օջախի պահապաններն են: Հետազոտական աշխատանքի արդիականությունը կայանում է նրանում, որ ինքնապաշտպանական մարտերում աչքի ընկած հայուհիների կատարած սխրագործությունների մասին տեղեկությունները ձևավորում է ոգեշնչման աղբյուր հետագա սերունդների համար:

Հայոց պատմության ամենամռայլ ու դաժան տարիներին հայ կինը հավատարիմ մնաց իր դարավոր կոչմանն ու զենքը ձեռքին պաշտպանեց իր և ազգի պատիվն ու արժանապատվությունը:

ԽՈՆԱՐՀ ՀԵՐՈՍՈՒՀԻՆԵՐԸ

Հայերի ոչնչացման ծրագիրն Օսմանյան կայսրությունում XIX դարի վերջին քառորդից պետական քաղաքականություն հռչակվեց՝ որպես Հայկական հարցի լուծման թուրքական եղանակ: Արևմտահայությունը պատրաստ չէր դիմակայելու պետական քաղաքականության աստիճանի բարձրացված ոճրագործությանը, թեպետ մի շարք վայրերում անհավասար գոյամարտ վարեց ջարդարարների դեմ: Դրանք չծրագրված, տարերայնորեն ծագած և միմյանցից անջատ էին: Ինքնապաշտպանական հերոսամարտի փայլուն օրինակներ դրսևորվեցին Վանում, Մուշում, Սասունում, Մուսա լեռան վրա, Շապին-Կարահիսարում, Ուրֆայում: Առաջին ինքնապաշտպանական կռիվները տեղի ունեցան Վան նահանգում: Կովկասյան ռազմաճակատում կրում էին պարտություն պարտության հետևից, Վանի կուսակալ Ջևդեթ փաշային հրահանգված էր արագ հաշվեհարդար տեսնել Վասպուրականի հանրության հետ:[1] Վանեցիներին ոչինչ չէր մնում, քան զինված պայքար մղել: 1915թ. ապրիլի 5-ին Այգեստանում կազմում է զինվորական մարմին: Նրա կազմում էին Արմենակ Եկարյանը, Կայծակ Առաքելը, Բուլղարացի Գրիգորը, հետագայում Փանոս Թերլեմեզյանը, Արամ Մանուկյանը: Քաղաքամեջում նույնպես ձևավորվեց ինքնապաշտպանության մարմին՝ Հայկ Կոսոյանի, Լևոն Գալճյանի, Միրզախան (Ժիրայր) Միրզախանյանի մասնակցությամբ: Թեև թշնամու համեմատ հայերը փոքրաթիվ էին, և նրանց սննդամթերքի ու ռազմամթերքի պաշարները՝ շատ սահմանափակ, սակայն այդ հանգամանքը փոխհատուցվում էր քաղաքի հայ պաշտպանների բարձր կազմակերպվածությամբ և սեփական անձը զոհաբերելու պատրաստակամությամբ:

---

1. Ա-Դո (Հովհաննես Տեր-Մարտիրոսյան), Մեծ դեպքեր Վասպուրականում 1914-1915 թվականներին, Երևան, 1917, էջ 12:

1915 թվականի ապրիլի 7-ի առավոտյան թուրքերը սկսել են հարձակումը: Թնդանոթային համազարկերը ավերածություն են առաջացրել շուրջբոլորը: Հայերը կռվել են չտեսնված համառությամբ ու կազմակերպվածությամբ՝ ամուր պահպանելով իրենց դիրքերը:

1915 թվականի ապրիլի 7-ին՝ առավոտյան ժամը 9-ին՝ Այգեստանի վրա հարձակվելուց երեք ժամ հետո, թուրքերը այստեղ էլ անցել էին գրոհի: Հայերը ոչ միայն քաջաբար պաշտպանվել էին, այլև հենց առաջին օրը հրդեհել էին փոստ-հեռագրատունը, ոստիկանատունը և դատարանը, որոնք թուրքերի համար դարձել էին ամուր դիրքեր: Այդ գործողությունների ժամանակ աչքի էին ընկել 16-ամյա Արամ Կապարուկյանը և Աղավնի Վարդապետյանը: Երկրորդ օրը՝ ապրիլի 8-ին, հայերը կարողացել էին ոչնչացնել կառավարական նոր փոստատունը և զինարանը[2]:Վանի ինքնապաշտպանությունը տևեց մոտ երկու ամիս: Ռուսական զորքի առաջխաղացումը ստիպեց թուրքերին նահանջել: Մայիսի 5-ին Վան մտան առաջին հայ կամավորները, իսկ մյուս օրը՝ Արարատյան գնդի մնացած մասը և ռուսական զորամասը: Մայիսի 5-ին Վան մտան հայ կամավորները, իսկ մյուս օրը՝ Արարատյան գնդի մնացած մասը և ռուսական զորամասը: Վանի և ազատագրված շրջանների ժամանակավոր նահանգապետ է նշանակվում Արամ Մանուկյանը: Քաղաքը և ազատագրված գավառները աստիճանաբար կյանքի բնականոն հունի մեջ են դրվում: Արևելահայ զանազան հասարակական-բարեգործական կազմակերպություններ և Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ն սկսում են կազմակերպել անհրաժեշտ օգնության առաքումը Վան: Սակայն ռուսական զորքի նահանջի պատճառով Վանի հայկական իշխանությունը դադարում է գործելուց:

---

2. Վան-Վասպուրականի հերոսամարտը, էջ 52:

Վասպուրականի 1915 թվականի ինքնապաշտպանական կռիվների ժամանակ աչքի ընկած հերոսներից էին Համասփյուռ Միրզոյանը (Խամաս), Զարուհի Տերոյանը (Ժենյա), Պնենց Տաթևիկը, Սախոյենց Նանոն: Նրանք կռվել են Վանի հերոսամարտի օրերին և փրկվել 1915 թվականի մայիսին ռուսական զորքի օգնությամբ: Վանի հերոսամարտի մասնակիցներից Քյանքան Խամբոյի աղջիկը՝ 19-ամյա Սևոն (Իսկուհի Համբարձումյան), կյանքը վտանգելով, հետախուզել էր թշնամու՝ Շահբենդերյանի դիրքը և հայ մարտիկներին առաջնորդել այնտեղ, նրանց հետ կռվելով՝ հաղթանակ էր տարել և պարգևատրվել «Պատվո խաչ» շքանշանով: Սուրհանդակի պարտականությունները կատարած 4 զավակների մայր Աղավնի Վարպետյանը թշնամու աչքի առաջ անցել էր 10 կմ ճանապարհ և Թաղի պաշտպաններին հասցրել անհրաժեշտ լուրերը: Դրա շնորհիվ Բազիկի ղեկավարությամբ հայ մարտիկները ճեղքել էին թշնամու օղակը և վերջնականապես ազատագրելշրջ ակա տարածքները:[3] Ներկայացնենք հայրենասեր հայուհիների կատարած փառահեղ դրվագներից: Հ. Միրզոյանը ծնվել է հեղափոխական գործունեությանը նվիրված ընտանիքում: Ծայրահեղ աղքատության պատճառով մայրը և մեծ քույրը՝ Գինոն, ուրիշների համար հաց են թխել և տաք թոնիրների մեջ կռանալու հետևանքով նրանց տեսողությունը շատ է վատացել: Սակայն Գինոն առաջնակարգ սուրհանդակ է եղել, պատրաստակամ՝ ծառայելու ֆիդայիներին, վստահելի պահակ՝ իրենց տանը ապաստանող փախստականների համար[4]:

---

3. Էդիկ Մինասյան, ՀԱՅ ՀԵՐՈՍՈՒՀԻ ԿԱՆԱՅՔ, Երևան ԵՊՀ հրատարակչություն 2016, էջ 128
4. 2 Զէյթլեան Ս., Հայ կնոջ դերը հայ յեղափոխական շարժման մէջ, Լոս Անճելլիս, Քալիֆորնիա, 1992, էջ 138

Խամասը ուսուցչուհի էր: Չնչին աշխատավարձով աշխատում էր աղջիկների վարժարանում, սակայն իրականում երդվյալ հեղափոխական գործիչ էր: Հանդուգն էր և կորովի, անվրդով և վճռական, նվիրված էր հեղափոխական գաղտնի ձեռնարկներին: Հայ ժողովրդի ազատագրումը նրա համար սուրբ նպատակ էր, որի համար պատրաստ էր նույնիսկ զոհել իր կյանքը:

Սերունդների համար հպարտության օրինակ է հանդիսանում Զարուհի Տերոյանը: Ս. Զէյթլեանի նշված գրքից տեղեկանում ենք, որ Վան-Վասպուրականի 1915 թվականի ինքնապաշտպանությունը կազմակերպելու համար բոլորին զինավարժություն է սովորեցրել, որպեսզի հարկ եղած ժամանակ կարողանային դիմադրել և պաշտպանել ոչ միայն իրենց, այլ նաև իրենց հարազատներին [5]:

Հիշատակելով հերոսուհի Կոմիտե Մայրիկին, ակամայից հիշում եմ Գ. Նժդեհի հետևյալ խոսքերը. «Ոչ իմաստասերներ, ոչ էլ թագավորներ օգնության կանչենք Հայրենիքին, այլ մայրական ազդեցությունը միայն»[6]: Կոմիտե Մայրիկը հայտնի հայդուկ Մարտիրոս Կոբելյանի մայրն էր: Նա Վան-Վասպուրականի հերոսամարտի օրերին մինչև վերջ ինքնապաշտպանության մասնակիցների կողքին էր: Նրանց օգնում էր ոչ միայն ջուր, սննդամթերք ու զինամթերք հասցնելով, այլև իր հայրենասիրական ոգևորող ճառերով, երբեմն էլ զենքը ձեռքին կռվելով:

Վանի ինքնապաշտպանության հերոսական էջերը հարուստ են հայրենասեր մայրերով, ովքեր իրենց անձնուրաց արարքով հպարտություն են ներշնչում սերունդներին, այդպիսիք են նաև Դրախտի Մայրիկը (Նանիկ Ջինոյան), Ազգային Մայրիկը:

---

5 Զէյթլեան Ս., Հայ կնոջ դերը հայ յեղափոխական շարժման մէջ, Լոս Անճըլըս, Քալիֆորնիա, 1992, էջ 98

6.Գ. Նժդեհ, Որդիների պայքարը հայրերի դեմ, 2018, էր 75

«Ազգային» անունն էին տվել, որովհետև երկար տարիներ շարունակ իր անձը, տունը և ընտանիքը ազգին «մատաղ» էր արել: Ոչ մի անձնական շահագրգռվածություն չուներ. նվիրված էր միայն ու միայն ազգի համար զոհաբերվող ֆիդայիներին ու հայդուկներին: Մայրիկը նրանց միշտ քաջալերում էր, խնամում, մխիթարում և նոր ոգևորությամբ համակում[7]: Վանի հերոսամարտում տղամարդկանց կողքին մարտնչեցին ու հերոսացան շատ վանեցի հայուհիներ: Նրանց մեծ մասը թիկունքում հսկայական աշխատանք էր տանում Կարմիր Խաչի եւ Վասպուրականի հայ կանանց միության կազմում: Վերջինս, որ բազում տարիներ տիկին Սողոմե Ջրբաշյանի եւ օրիորդներ Զարուհու, Հռիփսիմեի ու Արաքսի ղեկավարությամբ կարուձեւ էր ուսուցանում հայ օրիորդներին, կռիվի հաջորդող օրերին միացավ կազմակերպիչ հանձնախմբերին ու սկսեց հագուստ արտադրել զինվորների համար:

Համառ դիմադրություն ցուցաբերեց Շապին-Կարահիսարի հայ բնակչությունը, որը, հրաժարվելով աքսորվել Միջագետքի անապատներ, 1915 թ. հունիսի 3-29-ը հետ մղեց թուրքերի բոլոր գրոհները: Հայերի ինքնապաշտպանությունն այստեղ գլխավորում էր Ղուկաս Տեռվլաթյանը, որին հաջողվեց կազմակերպված բնույթ հաղորդել գործողությանը և հետ մղել թուրքական 10-հազարանոց զորքի ու մեծաթիվ խուժանի գրոհը: Թուրքերի կողմից պաշարողական հրետանու օգտագործումը հանգեցրեց հայկական թաղամասի՝ հիմնականում փայտաշեն տների ավերմանը: Մոտ 5000 հայ դիրքավորվեց քաղաքի վրա իշխող բլրի վրա գտնվող բերդում: Զենք ունեցող 500 քաջորդու դեմ նետվեց 20-հազարանոց բանակ, որին միայն մարտերի 27-րդ օրը հաջողվեց գրավել բերդը[8]:

---

7. Զեյթլեան Ս., նշվ. աշխ., էջ 103:

8.Լ.Ա. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ, Հայոց պատմություն, 2016, էջ 335

Հայերի մի մասը մինչ այդ ճեղքեց պաշարման շղթան և հեռացավ, իսկ բերդում մնացածների մի զգալի հատվածը՝ հիմնականում կանայք և աղջիկներ, ջարդարարների ձեռքը կենդանի չընկնելու համար թույն ընդունեց: Շապին Գարահիսարի հերոսամարտի նշանավոր մասնակից Գրիգոր Հյուսիսյանը ինքնապաշտպանության վերջին րոպեներն ներկայացնում է հետևյալ կերպ. «Գիշերվա խոր լռության մեջ բերդը կթնդար ողբի և լացի աղիողորմ ձայնով:... Տղամարդիկ վերջին համբույրներու հետ, իրենց կիներու համար պահած թույնը կհանձնեին անոնց և պաղատագին, լալագին կխնդրեին, որ իրենց ներկայության չի խմեն...Կիները խումբ-խումբ կընդունեին թույնը և շատ չանցած՝ առանց ձայնի ու բացականչության կիյնային գետին, կչարչարվեին և հետո անշունչ կտարածվեին...»[9]: Ինքնապաշտպանության բոլոր մասնակիցները հերոսներ են, քանզի մեկ մարդու նման ոտքի կանգնեցին հազարամյա ոսոխի դեմ: Շապին Գարահիսարի հերոսամարտի ընթացքում կանայք, արհամարհելով ամեն վտանգ, գիտակցելով մահվան մոտ լինելը, քաջություն են ունեցել գործելու հանուն հայրենիքի ազատության և ազգային արժանապատվության: Զենք ունեցող կանայք տղամարդկանց կողքին են եղել դիրքերում և կռվել են մինչև վերջին փամփուշտը, իսկ մյուսները շրջել են դիրքերում՝ խրախուսելով մարտիկներին: Մի մասն էլ իր մասնակցությունն է բերել՝ եռացած ջուր, հող և քարեր թափելով թշնամու վրա: Հիշատակության են արժանի հետևյալ հայուհիները՝ տիկիններ Վերոնիկա Թանջուտյանը, Գյուլզադե Թութունյանը, Լուսաբեր Ճեռպելեկյանը, Շնորհիկ Բուռնազյանը, Զիլ Տարիկը կամ Կաթոլիկ Տուրիկը, ինչպես նաև օրիորդներ Նորիկ Տեր-Մեսրոպյանը, Մարիամ Թաշճյանը, Վարդանուշ Գազանճյանը, Փիրուզ Սվազճյանը, Վարդուհի Գաբիկյանը և ուրիշներ[10]:

---

9. Ռ. Թաղևոսյան, Դրվագներ հայոց ռազմական պատմությունից XIX-XX դարեր, էջ 222

10. Զեյթլեան Ս., Նշվ. աշխ., էջ 125:

Կանանց խմբերն ինքնապաշտպանության ընթացքում փոխադրել էին պաշարը, իրենց ձեռքն ընկած ուտելիքը տարել բերդ: Ավելին՝ կանայք, ջրի թիթեղի ամանները իրենց մեջքներին կապած, թուրքական դիրքերի կողմերում գտնվող աղբյուրներից ջուր էին բերել: Նրանցից շատերը այդ ճանապարհի վրա զոհվել էին: Չնայած թշնամու կողմից տեղացող փամփուշտներին՝ կանայք շարունակել էին ջուր հասցնել կռվողներին և բերդում հավաքված հայրենակիցներին:

Շապին Գարահիսարի հերոսամարտը հայ գալիք սերունդներին որպես ավանդ թողեց իր Զինվորական Խորհրդի կողմից հռչակած պայքարի նշանաբանը, որի ներքո պայքարեցին ու նահատակվեցին հայ ազգային հերոս Անդրանիկ Զորավարի համաքաղաքացիները. «Մեռնելու երկու ձև կա, պատվավոր և անպատիվ մահ, թող աշխարհը ըսե թե գարահիսարցիք » [11] :

1915թ. Հայոց Մեծ եղեռնի ընթացքում տեղի ունեցած խոշոր ինքնապաշտպանական հերոսամարտերի շարքում իր արժանավոր տեղն ունի Մուսա լեռան ավելի քան 40 օր տևած հերոսամարտը: 1915 թ. հուլիսի 13-ին թուրքական իշխանությունները հրամայեցին Ալեքսանդրեթի ծոցին հարող Սուետիայի գավառակի 6 հայկական գյուղերի բնակիչներին՝ վաճառել ունեցվածքը և ճանապարհ ընկնել դեպի Միջագետք: Բնակչության փոքր մասը կտրուկ դեմ էր տարագրմանը ՝ այն համարելով անփառունակ և տառապալի մահ: Ինքնապաշտպանությունը կազմակերպելու և ղեկավարելու համար ստեղծվեց վարչական մարմին՝ Տիգրան Անդրեասյանի ղեկավարությամբ: Տ. Անդրեասյանը գտնում էր, որ զենքի պակասը կարելի է փոխհատուցել դիմադրության համար հայրենի լեռներով և ժողովրդի անկոտրում ոգով: Ճիշտ որոշում ընդունելուց հետո տեղի զուտ հայկական վեց գյուղերի 4200-ից ավելի

---

11. Ռ. Թադևոսյան, Դրվագներ հայոց ռազմական պատմությունից XIX-XX դարեր, էջ 225

բնակիչներ վճռում են բարձրանալ Մուսա լեռ: Օգոստոսի սկզբից սկսվում է հերոսական դիմադրությունը: Օգոստոսի սկզբից սկսվում է հերոսական դիմադրությունը: Շրջափակման մեջ գտնվող հայերի համար փրկության միակ ելքը Միջերկրական ծովն էր: «Քրիստոնյաները աղետի մեջ են. փրկեցե՛ք մեզ» մակագրությամբ և կարմիր խաչի նշանով 2 դրոշ հայերն ամրացրին բարձր ծառերի կատարներին՝ հուսալով գրավել Անտանտի երկրների՝ լեռան կողքով անցնող նավերի ուշադրությունը: Պաշտպանության 53-րդ օրը լեռանը հարող ափին կառանեց ֆրանսիական մի ռազմանավ, որի տախտակամած բարձրացան մի քանի հայեր և նավապետին տեղեկացրին իրենց օրհասական վիճակի մասին: Շուտով ափին մոտեցան մի քանի ռազմանավեր և 2 տրանսպորտային շոգենավեր: Ռազմանավերի հրետանային կրակի պաշտպանության տակ ավելի քան 4000 հայ շոգենավերով տեղափոխվեց եգիպտական Պորտ-Սայիդ նավահանգիստ[12]: Մուսա լեռան հերոսամարտում իրենց խիզախությամբ աչքի են ընկել Պետրոս Գալուստյանը, Մանուկ Գըլճյանը, Մարտիրոս Ճանսըզյանը, Գրիգոր Նգրուրյանը, Հակոբ Խեչոնյանը, Սարգիս Շաննագյանը, Պողոս Գպպուրյանը և շատ ուրիշներ: Տղամարդկանցից ետ չեն մնացել նաև հայ կանայք ու աղջիկները, որոնցից աչքի են ընկել հատկապես Շուշանիկ Գապայանը (նա բոլոր մարտերում իր ամուսնուն կողքին էր), ինչպես նաև Մանուշակ ՄանուկյանՅաղուպյանը, Վարդեր Զեյթլյանը, Եղիսաբեթ Սգայանը և ուրիշներ[13]:

Սուետիայի գոյամարտի մոտ մեկուկես ամսվա ընթացքում կանայք տղամարդկանց արժանավոր օգնականներ են եղել: Նրանք չարքաշությամբ և համբերությամբ տոկացել են ցերեկվա շոգին, գիշերվա ցրտին, սովին, տափաստանին և ապահովության պակասին:

12.Լ.Ա. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ, Հայոց պատմություն, 2016, էջ 321

13. Ռ. Թադևոսյան, Դրվագներ հայոց ռազմական պատմությունից XIX-XX դարեր, էջ 233

Թեև կանայք կռվել են փոքրաթիվ ուժերով լավ զինված բանակի դեմ, չեն հուսահատվել, ոչ էլ իրենց սարսափով խուճապ են ստեղծել:

Թուրքի գնդակից չվախեցող աննման, քաջ ու անվախ հայուհիներից էր Ծաղեր Տեր-Մովսիսյանը: Այս կինը հանգիստ ու դադար չուներ. անընդհատ շրջում էր դիրքերում, քաջալերում մարտիկներին՝ կրկնելով. «Կրակեցե՛ք եղբայրներ, հայի զենքը անգործ պիտի չմընա»[14]:

Իրենց եղբայրների և ամուսինների կողքին զենքը ձեռքին կռվող սուետիահայուհիների շարքում առանձնանում էր Շուշան Գապայանը՝ անձնվեր և անվեհեր մի կին, ով մահվանը նայում էր հանդարտությամբ և արժանապատվորեն[15]:

Վերջին ճակատամարտի ընթացքում, երբ թուրքական բանակը սպառնացել էր բնաջնել ժողովրդին, անձնվիրության և քաջության օրինակներ էր ցույց տվել Մանուշակ Մանուկյան-Յաղուբյանը: Նա, թիկունքից կանանց գլուխն անցած, գրոհել էր թշնամու վրա զինված քարերով, գավազաններով և դարավոր ատելությամբ համակված: Այս առիթով հիշատակության են արժանի նաև Եղիսաբեթ Սգայանը և նրա դուստրը:

Մուսան լեռան հերոսամարտի բոլոր մասնակիցները երախտագիտությամբ են հիշում սուետիահայուհիների կատարած սխրանքը, նրանց կամքն ու կորովը, հոգեկան արիությունն ու տոկալու կարողությունը: Հայ կնոջ այս հոգին է, որ մեր օջախը վառ է պահել դարերի ընթացքում, և հակառակ տարիների ստրկության ու արյան հեղեղներին՝ հայրենի տան նվիրական ծուխն ու արիությունը անխափան փոխանցել է սերնդեսերունդ[16]:

14.Զեյթլեան Ս., նշվ. աշխ. էջ 127:

15. Զեյթլեան Ս., նշվ. աշխ. էջ 133:

16. Էդիկ Մինասյան, ՀԱՅ ՀԵՐՈՍՈՒՀԻ ԿԱՆԱՅՔ, Երևան ԵՊՀ հրատարակչություն 2016, էջ 163

1932թ. Սեպտեմբերի 18-ին, մեծ հանդիսությամբ Մուսա լեռան վրա, Տամլաճըգում բացվեց 1915թ. Հերոսամարտին նվիրված փառահեղ հուշակոթող, որի հովանո ներքո հանգչում էին ինքնապաշտպանության ընթացքում զոհված 18 մուսալեռցի քաջերի աճյունները:

Հետագա 7 տարիներին այն դարձավ ուխտատեղի: 1939թ. Այն բանից հետո, երբ Ալեքսանդրեթի գավառի կազմում Սուետիան նույնպես բռնակցվեց Թուրքիային, թուրք վանդալները պայթեցրին հուշարձանը՝ ոչնչացնելու համար մի բուռ հայության անկոտրում կամքի և սեփական անզորության այդ քարե վկայականը: Բայց եթե թուրքերը կարողացան ոչնչացնել Տամլաճըգի հուշարձանը, ապա մեկ այլ՝ հոյակերտ հուշարձան նրանք երբեք ի զորու չեն լինի ավերելու: 1933թ. լույս է տեսել Ֆրանց Վերֆելի « Մուսա լեռան քառասուն օրը» պատմավեպը: Այս անմահ ստեղծագործությունը հետագայում թարգմանվել է ու հրատարակվել է եվրոպական գրեթե բոլոր լեզուներով նաև թարգմանված է թուրքերեն: Ռուս մեծ գրող Միխայիլ Դուդինը՝ Վերֆելի այս գործը անվանել է «Դիմադրության դասագիրք»:

Երիտթուրքեր ջարդարարների դեմ ինքնապաշտպանություն կազմակերպվեց նաև Ուրֆայում(Եդեսիա): Քաղաքի 100 հազար բնակչից 35 հազարը հայեր էին: 1915 թ. հուլիսի 18-ին Ուրֆայի թուրքական իշխանությունները պահանջեցին քաղաքի հայերից հանձնել զենքը: Հուլիսի 20-ին ձերբակալվեց Ուրֆայի հայերի հոգևոր առաջնորդը, իսկ օգոստոսի սկզբին գնդակահարվեցին զորակոչված 1500 հայ երիտասարդներ: Ուրֆայի հայերը որոշեցին դիմել զինված ինքնապաշտպանության: Ստեղծվեց ինքնապաշտպանության խորհուրդ 30-ամյա Մկրտիչ Յոթնեղբարյանի գլխավորությամբ[17]: Ինքնապաշտպանները հաջողությամբ հետ են մղում թուրքական հետևակի և քրդական անկանոն

---

17. Լ.Ա. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ, Հայոց պատմություն, 2016, էջ 320

ջոկատների բազմաթիվ գրոհները: Թուրք իշխանավորը, կեղծ խոստումներով կոչ էր անում վերջ տալ առճակատմանը և հաջորդ օրն իսկ վերականգնել քաղաքի խաղաղ առօրյան: Նրան պատասխան տրվեց. «Ուրֆայի հայությունը մեռնել իր հայրենի օջախի շեմին, կռվելով մինչև վերջին փամփուշտն ու վերջին մարդը»:[18] Սեպտեմբերի 29-30-ին տեղի ունեցավ թուրքական ժանդարմերիայի և ամբոխի գրոհը հայկական թաղամասի վրա: Այս գրոհը, որ թուրքերի համար արժեցավ 400 զոհ, հետ մղվեց: Փայլուն հաղթանակը չտեսնված ցնծություն առաջացրեց հայ բնակչության և հայ մարտիկների մոտ: Հոգեբանական վերելքն այնքան ուժեղ էր, որ դիրքերից վերադարձած Մ. Յոթնեղբայրանից մի խումբ կանայք և աղջիկներ վճռականորեն պահանջեցին իրենց նույնպես զինել և ուղարկել դիրքերը: Ա. Սահակյանի բնորոշմամբ «Հետագա կռիվներուն մեջ պիտի հայտնվեին սքանչելի դեմքերը այս աղջիկներուն, որոնք քաջությամբ վար չմնացին իրենց եղբայրներեն»[19]: Հոկտեմբերի 1-ին հարձակումը կրկնվեց: Հայերը թույլ տվեցին թուրքերին մուտք գործել հայկական թաղամաս, ապա դարանակալ հարված հասցրին՝ լուրջ կորուստներ պատճառելով հարձակվողներին: Հոկտեմբերի 3-ի գիշերային մարտում, հայ երիտասարդների ու պատանիների կողքին իր քաջությամբ փայլեց նաև հայ աղջիկների խումբը՝ իր անվեհեր խմբապետուհի՝ օրիորդ Մարիամ Չիլինկիրյանի գլխավորությամբ: Խոսելով այդ մարտի մասին, Ուրֆայում որպես ներկալված անձ գտնվող ֆրանսիացի Ռըպուրը գրում է հետևյալը. «Հայերը գիտենալով, որ պիտի մեռնին, որոշեր էին սուղի ծախել իրենց կյանքերը ու առավելագույն վնասը պատճառել թուրքերուն: Կիներն անգամ հրացանաձգության կմասնակցեին»[19]:

18.Ռ. Թադևոսյան, Դրվագներ հայոց ռազմական պատմությունից XIX-XX դարեր, էջ 248

19. Ռ. Թադևոսյան, Դրվագներ հայոց ռազմական պատմությունից XIX-XX դարեր, էջ 251

Շուտով հայտնի է դարձել, որ Հալեպից դեպի Ուրֆա է գալիս Ֆախրի փաշան՝ 6000-անոց զորքով ու թնդանոթներով, ինչպես նաև Սուլեյման բեկը՝ 600 մարտիկներով: Դեպի Ուրֆա են ձգվել նաև շրջակայքի քրդական աշիրեթները: Հոկտեմբերի 6-ի առավոտյան Մ. Յոթեղբայրյանը ծրագրեց բացառիկ մի գործողություն, համաձայն որի, քաղաքի մուտքի մոտ, քրդական տարազով ծպտված հայ մարտիկների խումբը պետք է հարձակվեր գերմանական հրանոթների վրա և դրանք շարքից դուրս բերելուց հետո՝ արագ ետ քաշվեր: Այդ չափազանց վտանգավոր, գրեթե ինքնսպանության համազոր ձեռնարկն իրականացրեց նրա եղբայր Քոռ Սաքոն՝ իր 6 անվեհեր մարտիկների հետ միասին: Հայ մարտիկների անսպասելի հարձակումը մի այմպիսի իրարանցում ու սարսափ առաջացրեց թշնամու մոտ, որ խճուղով շարժվող զորքերը գերադասեցին շեղել ճանապարհը և քաղաք մտնել գերմանական հիվանդանոցի թիկունքում գտնվող այգիների միջով: Հոկտեմբերի 7-ի առավոտյան, Մ. Յոթնեղբայրանը ստացավ Ֆախրի փաշայի կողմից ուղարկված նամակ, որում թուրք զինվորականն իր կեղծ հիացմունքն էր արտահայտում հայ մարտիկների քաջության հանդեպ: Փաշան նաև «խոստանում էր» ոչ միայն չպատժել ապստամբներն, այլև նրանց ընդունել թուրքական բանակի մեջ: Չհանձնվելու դեպքում, նա խոստանում էր 24 ժամում քարուքանդ անել հայկական թաղը: Զինվորական մարմնի կողմից տրված պատասխանում ասվում էր, որ թուրք հրամանատարն իզուր է ջանում խաբել հայերին. «Ուրֆայի հայությունը պիտի կռվի մինչև վերջին մարդը, ոչ դուք պիտի խնայեք մեզ և ոչ ալ մենք ձեր զինվորներուն»[20]:

Հոկտեմբերի 3-23-ը 12-հազարանոց խուժանը և 6000 զինվորներ գերմանացի սպաների անմիջական հրամանատարությամբ անընդմեջ թնդանոթաձգության ուղեկցությամբ գրոհում էին հայերի դիրքերը: Հայ պաշտպանների թիվն օրավուր նոսրանում

---

20. Ռ. Թադևոսյան, Դրվագներ հայոց ռազմական պատմությունից XIX-XX դարեր, էջ 255

էր: Սպանվեցին մարտական խմբերի հրամանատարները: Պարպելով բոլոր գնդակները՝ վերջինով ինքնասպան եղավ վիրավոր Մկրտիչ Յոթնեղբարյանը: Ներխուժելով հայկական թաղամաս՝ թուրքերն արյան խրախճանք սարքեցին: Ուրֆայի 25-օրյա հերոսամարտում սպանվեցին 2000 թուրք ջարդարարներ: Ուրֆայի հայերի ինքնապաշտպանության ամենաուշագրավ գնահատականը տվել է Ֆահրի փաշան. «Ի՞նչ կլիներ մեր վիճակը, եթե այդ ծանր օրերին մեր դեմ այսպիսի մի քանի Ուրֆա ծառանար»[21]:

Հոկտեմբերի 23-ին՝ կիրակի օրը, մեռյալ լռություն էր: Այդ օրը ավարտվեց Ուրֆայի հայության մեկամսյա հերոսամարտը: Վերջին օրերին Մկրտիչ Յոթնեղբայրյանին պատգարակով դիրքից դիրք են տարել, և միայն նրա երևալը ուժ է հաղորդել ուժասպառ մարտիկներին: Մի վերջին ճիգով նա աջ ու ձախ կրակել է թուրք զինվորների վրա և վերջին գնդակով կյանքն ավարտել փառավոր մահով: Ֆախրի փաշան թնդանոթի 24 համազարկով թուրք խուժանին տեղեկացրել է հերոսի մահվան մասին375: Հանուն Հայոց աշխարհի ընկել են նաև Գևորգ Ալահայտոյանը, Սարգիս Յոթնեղբայրյանը, Հարություն Սիմյանը, Արմենակ Աթարյանը, Լևոն Չերչյանը, Վաղարշ Մեսրոպյանը, Գառնիկ Շամլյանը և բազմաթիվ հերոսներ[22]:

Ուրֆայի հերոսամարտին իրենց մասնակցության մեծ բաժինն են ունեցել Ուրֆայի հայուհիները: Նրանք ոչ միայն գթության քույրեր էին, այլև դիրքերում զենքը ձեռքին կռվողներ, իրենց ամուսիններին ու եղբայրներին ոգեշնչողներ: Այսպես՝ Եղիսաբեթ Յոթնեղբայրյանը Մկրտիչի կինն էր ու նրա համհարզը, զինավառ Սուլթան Սիմյանը Ռասթկելենյանի քույրն էր: Իրենց հերոսությամբ աչքի են ընկել նաև օրիորդներ Մարիամ Չիլինկիրյանը, Խանում Քեթենճյանը, տիկին Խաթուն Գոնտուրճյանը և շատ ուրիշներ: Նրանցից շատերն ընկել են

---

21. Լ.Ա. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ, Հայոց պատմություն, 2016, էջ 319

22. Սահակեան Ա., Դիւցազնական Ուրֆան եւ իր հայորդիները, Անթիլիաս, 2014 ,էջ691

դիրքերում կամ օրհասական վերջին գրոհից հետո թույն խմել, իսկ ոմանք էլ, իրենց զավակների ձեռքից բռնած, նետվել են իրենց ձեռքով հրդեհված տների բոցերի մեջ[23]: Այսպես ավարտվել է Ուրֆայի 25-օրյա հերոսամարտը՝ հայոց ինքնապաշտպանական հերոսամարտի հերթական փառավոր էջը:

Հայ հերոսուհիներն իրենց սխրագործություններով աչքի են ընկել Տարոնի, Մուշի և Խնուսի, Սասունի, Պոնտոսի, Ֆընտըճագի ինքնապաշտպանական մարտերում: Հիացմունիքի է արժանի Մուշի Կոտոյի Հաջիի կինը՝ Եղսոն և Հաջիի կին Փառանձեմը: Այս երկու կանայք իրենց տան աստիճանների տակ իրենց իսկ ձեռքով փորել էին մի գաղտնարան՝ հեղափոխական գրականություն, զենք ու փախստական հեղափոխականներ պահելու համար:

Եղսոն հնարամիտ էր ու ճարպիկ: Մի քանի անգամ, ոստիկանությունը տունը խուզարկելով, Եղսոյին և Փառանձեմին բանտ էր նստեցրել և չարչարանքների ենթարկել նրանց, սակայն ոչինչ չէր գտել, քանի որ կանայք ոչինչ չէին ասել այն դեպքում, երբ Ռուբենին և Տարոնի ազատամարտի այլ գործիչներին ամիսներով իրենց տանն էին պահել[24]: Այս հերոսուհի կանայք Սասունի ղեկավար ընկերների հանձնարարություններն էին կատարում՝ վայելելով նրանց վստահությունն ու հարգանքը: Երբ 1915 թվականի հուլիսի 12-ին թուրքերը սկսել էին թնդանոթներով ռմբակոծել Մուշը, Կոտոյի Հաջին, որը վերադարձել էր հայրենի օջախ, իր տունը անառիկ բերդի էր վերածել՝ կռվելով իր տղայի, կնոջ և քրոջ հետ կողք կողքի: Երկու օր անընդհատ դիմադրել էր, հետո երբ ռազմամթերքը վերջացել էր, հերոսուհի կինը՝ Եղսոն, խնդրել էր ամուսնուց, որ զնդակահարի իրենց՝ թշնամու ձեռքը չընկնելու համար:

---

23. Էդիկ Մինասյան, ՀԱՅ ՀԵՐՈՍՈՒՀԻ ԿԱՆԱՅՔ, Երևան ԵՊՀ հրատարակչություն 2016, էջ 192

24. Զէյթլեան Ս., նշվ. աշխ., էջ 85:

Կոտոյի Հաջին խորը վշտով իրականացրել էր կնոջ ցանկությունը, իսկ վերջին փամփուշտով վերջ էր տվել իր կյանքին: Հիշատակության են արժանի նաև Մուշի Վերին թաղի ինքնապաշտպանության ժամանակ աչքի ընկած 28 հայուհիները: Նրանց թվում էր նաև հերոս հայուհի Անուշ Մկրտչյանը, որը ոչ միայն ոգևորում էր կռվող մարտիկներին, զենքը ձեռքին՝ դիպուկ նշանառությամբ տապալում թուրք և քուրդ ոսոխներին, այլև կանանց խմբերի հետ միասին հասցնում էր ջուր, սնունդ և զինամթերք մատակարարել դիրքերի պաշտպաններին[25]:

Մշո դաշտի գյուղերի հերոսական ինքնապաշտպանության օրերին հայ կանայք տղամարդկանց կողքին կամ առանց նրանց անարգ ոսոխի դեմ կռվել են հերոսաբար: Շատ հաճախ զենքի և փամփուշտի բացակայության պայմաններում թշնամու ձեռքն ընկնելուց խուսափելու համար դիմել են գիտակցված ինքնասպանության, իրենց անունն ու պատիվը բարձր պահելով ու հերոսանալով սերունդների աչքում: Նման հերուսուհի կանանցից էր ցրոնքցի Տիրուն (Տշտոն) Եղսոյանը, Խամեն:

Սասունի հերոսամարտի տարիներին եղել են հերոսուհի հայուհիներ, որոնք, դիմելով անձնազոհության, հանձն են առել և Սասուն տեղափոխել անհրաժեշտ զենքն ու զինամթերքը: Նման անվախ ու քաջասիրտ հայուհիներ էին Մարթան, Հալեպի Երրերակը՝ Երիցուհի Վարդուհի Մուրադյանը, Լուսյա Գրիգորյանն ու Ֆերիդե Սահակյանը:

1915 թվականին Հայոց մեծ եղեռնի ընթացքում տեղի ունեցած ինքնապաշտպանական հերոսամարտերի շարքում իր պատվավոր և ուրույն տեղն ունի Ֆընտըճագի հերոսամարտը: Թուրք ցեղասպանների դեմ մղվող օրհասական կռվում իրենց խիզախությամբ փայլեցին նաև հայ կանայք ու

---

25. Սասուն Կ., Պատմություն Տարոն աշխարհի, Բեյրութ 1956թ, էջ 839

Աղջիկներ: Նրանցից շատերը զինամթերք, կերակուր ու ջուր էին հասցնում խրամատներուն գտնվող իրենց եղբայրներին, հայրերին ու ամուսիններին: Իսկ նրանցից ոմանք, նաև զենքը ձեռքին, մարտնչում էին թուրք ջարդարարների դեմ: Նրանց թվում էր օրիորդ Խաթուն Չավուշը (Յափուճյան), ով իր զինավարժությամբ ու քաջությամբ հայտնի էր ամբողջ Ֆընտըճագում: Նա աչքի ընկավ հերոսական սխրագործություններով[26]: Հերոսամարտը տևել է 19 օր: Հերոսամարտի ավարտից հետո ողջ մնացածները, հիմնականում կանայք և երեխաներ, մահվան քարավանով աքսորվեցին Դեր Զոր:

Ինքնապաշտպանական հերոսամարտերին հայ կնոջ հերոսական մասնակցության առումով բավական ուշագրավ դրվագ է Ծովք լճի Ս. Նշան կղզում համանուն Ծովք գյուղի մի խումբ հայդուկների մղած գոյապայքարը 1915 թվականին հուլիս-հոկտեմբեր ամիսներին[27]: Հայդուկային փոքր խմբում մարտնչում էր 18 ամյա օրիորդ Սուլթանը: Հոկտեմբերի 22-ը դարձավ զգալիորեն նոսրացած հայդուկային խմբի վերջին օրը: Մի քանի տասնյակ լաստերով գրոհող թշնամին հանդիպեց կատաղի դիմադրության: Իր քաջությամբ հատկապես փայլեց օրիորդ Սուլթանը: Նա զոհվեց վերջինը և մինչ այդ հասցրեց գնդակահարել 2 զինվորի և 1 տասնապետի:

Այսպիսով՝ հայերը կարողացան որոշ քաղաքներում և գյուղերում զինված դիմադրություն կազմակերպել ու արժանի հակահարված տալ թուրք և քուրդ ջարդարարներին: Հայուհի հերոսների ինքնապաշտպանական մարտերում ցուցաբերած անձնազոհության շնորհիվ հնարավոր եղավ հնարավորինս քիչ կորուստներով դիմագրավել թշնամուն:

---

26. Թադևոսյան Ռ., նշվ. աշխ., էջ 316:

27. Թադևոսյան Ռ., նշվ. աշխ., էջ 323:

Եզրակացություն

Հետազոտական աշխատանքում փորձել եմ հանրագումարի բերել 1915թ. ինքնապաշտպանական մարտերում աչքի ընկած հայուհիների մասին տեղեկություններ, որոնց կատարած սխրագործության շնորհիվ է դարերով վառ պահվել հայ օջախը: Հերոսամարտերի ընթացքում մեր հերոսուհիները միայն գթության քույրեր, վիրավորներ խնամող, աղբյուրներից ջուր տանող, պարեն փոխադրող չեղան, այլ արհավիրքի ժամին դարձել են քաջ զինվորներ՝ Հերոսաբար մաքառելով իր տուն ներխուժած թշնամուն դուրս վռնդելու և հայրենի տանը տեր կանգնելու համար: Զավակների մեջ հայրենասիրության ոգի դաստիարակող հայ մայրը միշտ էլ ազգի համար օրհասական պահերին կռվի է դուրս եկել անարգ ոսոխի դեմ: Մեր պարտքն է իմանալ հերոսուհիների անունները, կատարած սխրագործությունները և գալիք սերունդներին հաղորդել նրանց պատգամը: Կարծում եմ ինքնապաշտպատական մարտերում մասնակցած հայուհիները ծանոթ են եղել 5-րդ դարից սկսված մեր հերոս հայուհիների կատարած սխրագործությունների, անձնազոհությունների մասին և իրենք էլ իրենց նախամայրերի արժանի սերունդները դարձան: Այդ հերոսական շղթան մենք տեսնում են նաև Հայրենական մեծ պատերազմի, Արցախյան գոյամարտի ընթացքում՝ հայ կանայք տղամարդկանց կողքին էին, նրանց ոգևորում և աջակցում էին բոլոր հարցերում:

Զենքի դիմած հայորդիներ՝տղամարդ, թե կին, իրենց գիտակցված մահով փրկել և սրբագործել են ազգային արժանապատվությունը:

Գրականության ցանկ

1. Ա-Դո (Հովհաննես Տեր-Մարտիրոսյան), Մեծ դեպքեր Վասպուրականում 1914-1915 թվականներին, Երևան, 1917
2. Վան-Վասպուրականի հերոսամարտը

3. Էդիկ Մինասյան, ՀԱՅ ՀԵՐՈՍՈՒՀԻ ԿԱՆԱՅՔ, Երևան ԵՊՀ հրատարակչություն 2016

4. 2 Զէյթլեան Ս., Հայ կնոջ դերը հայ յեղափոխական շարժման մէջ, Լոս Անճըլըս, Քալիֆորնիա, 1992
5. Լ.Ա. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ, Հայոց պատմություն, 2016
6. Ռ. Թադևոսյան, Դրվագներ հայոց ռազմական պատմությունից XIX-XX դարեր
7. Գ. Նժդեհ, Որդիների պայքարը հայրերի դեմ, 2018
8. Սասուն Կ., Պատմություն Տարոն աշխարհի, Բեյրութ 1956թ
9. Սահակեան Ա., Դիւցազնական Ուրֆան եւ իր հայորդիները, Անթիլիաս, 2014